



ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ինֆորմատիկայի և վիճակագրության
ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են պետական բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուրների՝ ըստ տարբեր մեթոդաբանության դասակարգման համադրելիության ապահովման հիմնահարցերը: Մասնավորապես՝ առաջարկվել են այնպիսի հաջորդական քայլեր, որոնք հնարավորություն կընձեռեն ՀՀ պետական բյուջեի եկամուտների աղբյուրները ներկայացնել համադրելի տեսքով ինչպես հետանկախացման տարիների, այնպես էլ այլ երկրների համապատասխան ցուցանիշների առումով:

Հիմնաբառեր. պետական բյուջե, բյուջետային եկամուտներ, ֆինանսների վիճակագրություն, հարկային եկամուտներ, պետական տուրքեր
JEL: H24, H25, H27, H30, C40

Պետական ֆինանսների, այդ թվում՝ պետական բյուջեի վիճակագրությունը հարկաբյուջետային քաղաքականության մշակման կարևորագույն գործիքն է, քանզի վերջինս է ապահովում համակարգված տեղեկատվություն պետական կառավարման մարմինների եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Պետական ֆինանսների վիճակագրության տվյալները նպաստում են նաև տնտեսական աճի, բնակչության կենսամակարդակի բարձրացման և այլ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ու համապատասխան քաղաքականության մշակմանը:

Անցած դարի 90-ական թվականների վերջին միջազգային վիճակագրական կազմակերպությունները կարևորեցին պետական ֆինանսների վիճակագրության և Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ-1993) ներդաշնակեցման հարցը: Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված հայեցակարգի հիմնական դրույթները լուսաբանվեցին 2001 թ. հրատարակ-

ված «Կառավարության ֆինանսների վիճակագրություն» (ԿՖՎ–2001) ձեռնարկում: Նախկին տարբերակի (ԿՖՎ–1986) համեմատ, նոր ձեռնարկում արդեն համապատասխանեցվել են պետական ֆինանսների վիճակագրության և ԱՀՀ–1993-ի ցուցանիշները, սահմանումներն ու դասակարգումները:

«ԿՖՎ–2001» ձեռնարկը, տարբեր մակարդակների բյուջեների եկամուտների և ծախսերի աղբյուրների սկզբունքորեն նոր դասակարգման միջոցով, հնարավորություն է ընձեռում վերլուծելու երկրների պետական ֆինանսների ոլորտում տեղի ունեցող գործառնությունները, մասնավորապես՝ համադրելու ինչպես բոլոր մակարդակների բյուջեների եկամուտների և ծախսերի առանձին աղբյուրների մասնաբաժինները, այնպես էլ հարկեր/ՀՆԱ և ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունները:

Հարկ է նշել, որ «ԿՖՎ–2001» ձեռնարկը բյուջետային եկամուտներ է համարում բոլոր այն գործառնությունները, որոնց արդյունքում տեղի է ունենում ակտիվների զուտ արժեքի մեծացում, իսկ «ԿՖՎ–1986» ձեռնարկը՝ բոլոր անվերադարձ մուտքերը, բացի պաշտոնական դրամաշնորհներից: Ավելին, ըստ «ԿՖՎ–1986» ձեռնարկի դասակարգման, եկամուտները ստորաբաժանվում են *հարկային, ոչ հարկային և կապիտալ գործառնություններից եկամուտների*, ընդ որում՝ *պաշտոնական դրամաշնորհները* դիտարկվում են որպես մուտքերի ինքնուրույն կատեգորիա՝ չհամարվելով եկամուտներ (աղյուսակ 1-ի 1-ին սյուն): «ԿՖՎ–2001» հայեցակարգում եկամուտների դասակարգումն այլ է՝ *հարկեր, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (ՊՍԱՎ), դրամաշնորհներ և այլ եկամուտներ* (աղյուսակ 1-ի 2-րդ սյուն):

Առաջին տարբերությունն այն է, որ, ըստ «ԿՖՎ–2001» դասակարգման, պաշտոնական դրամաշնորհներն ընդգրկվում են եկամուտների կազմում, իսկ ոչ ֆինանսական ակտիվների վաճառքից մուտքերը չեն ընդգրկվում: Երկու դեպքում էլ որպես հիմք է ընդունվում ակտիվների զուտ արժեքի մեծացման չափանիշը. առաջինի դեպքում դա բավարարվում է, իսկ երկրորդի դեպքում՝ ոչ:

Հաջորդ տարբերությունն այն է, որ նոր տարբերակում ՊՍԱՎ-ն առանձնացվել է հարկային եկամուտներից և ներկայացվել որպես եկամուտների ձևավորման ինքնուրույն աղբյուր: Վերջապես, ըստ «ԿՖՎ–2001» դասակարգման, «այլ եկամուտներ» կատեգորիան ներառում է ոչ հարկային եկամուտներն ու կապիտալ տրանսֆերտները, որոնք նախորդ տարբերակում դասակարգվել են որպես *եկամուտներ կապիտալ գործառնություններից*:

Պետական բյուջեի վիճակագրությունում, հատկապես ժամանակային շարքերի կառուցման ժամանակ, կարևորվում է ցուցանիշների համադրելիությունը, քանզի բյուջեի դասակարգումը ժամանակի ընթացքում ենթարկվում է էական փոփոխությունների: Ուստի, պատմական շարքերի համադրելիությունն ապահովելու նպատակով, նախորդ ժամանակաշրջանների մակարդակները վերախմբավորվում են ըստ տվյալ պահին գործող դասակարգման:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների աղբյուրների կազմն ըստ «ԿՖՎ-1986» և «ԿՖՎ-2001» դասակարգումների¹

Պետական բյուջեի եկամուտների կազմն ըստ «ԿՖՎ-1986»-ի	Պետական բյուջեի եկամուտների կազմն ըստ «ԿՖՎ-2001»-ի	ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմը		
		ԿՖՎ-1986	ԿՖՎ-2001	
		մինչև 2008 թ.	2008-2012 թթ.	2013 թ. հետո
1	2	3	4	5
1. Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	1. Եկամուտներ	1. Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	1. Պետական բյուջեի եկամուտներ	1. Պետական բյուջեի եկամուտներ
1.1. Եկամուտներ	1.1. հարկային եկամուտներ	1.1. Եկամուտներ	1.1. հարկային եկամուտներ	1.1. հարկային եկամուտներ*
1.1.1. ընթացիկ եկամուտներ – հարկային եկամուտներ – ոչ հարկային եկամուտներ		1.1.1. ընթացիկ եկամուտներ – հարկային եկամուտներ* – պետական տուրքեր – ոչ հարկային եկամուտներ		
1.1.2. եկամուտներ կապիտալ գործառնություններից		1.1.2. եկամուտներ կապիտալ գործառնություններից		
1.2. դրամաշնորհներ	1.2. պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	1.2. դրամաշնորհներ	1.2. պետական տուրքեր	1.2. պետական տուրքեր
	1.3. դրամաշնորհներ		1.3. պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	1.3. դրամաշնորհներ
	1.4. այլ եկամուտներ		1.4. դրամաշնորհներ	1.4. այլ եկամուտներ
			1.5. այլ եկամուտներ	

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված և «Руководство по статистике государственных финансов 2001 года», МБФ, 2001, էջ 59, 185:

* 2013 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 22.12. 2010 թ.) և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների (ընդունվել է 22.12. 2010 թ.) համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները ներառվել են ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2002 և 2012 թթ.²
ըստ որոշ երկրների («ԿՖԿ-2001» դասակարգում, %)²

Երկիր	Հարկային եկամուտներ		ՊՍԱԿ		Պաշտոնական դրամաշնորհներ		Այլ եկամուտներ	
	2002	2012	2002	2012	2002	2012	2002	2012
Հայաստան	75.1	79.2	14.3	13.6	4.1	5.2	6.4	2.0
Ռուսաստան	47.9	54.6	23.7	14.4	28.4	31.0	-	-
Ավստրիա	56.6	57.0	36.6	33.7	10.3	9.1	0.5	0.2
Բելառուս	53.3	61.9	40.9	24.9	5.6	13.2	0.2	-
Հունգարիա	58.9	55.3	29.3	28.6	11.6	11.8	0.2	4.3
Հունաստան	54.0	51.0	28.0	30.7	15.9	17.3	2.1	1.0
Ուկրաինա	45.7	54.8	34.8	29.0	14.8	16.2	4.7	-
ԱՄՆ	57.5	64.9	36.4	20.2	6.1	14.9	-	-
Կանադա	69.1	68.9	23.8	12.2	6.9	18.4	0.2	0.5
Լատվիա	56.6	51.8	28.0	23.1	13.9	10.4	1.5	14.8
Լիտվա	63.0	48.8	27.3	34.5	7.6	8.2	2.1	8.5
Մոլդովա	51.7	61.1	29.0	26.7	9.5	7.8	9.8	4.5
Հոլանդիա	54.6	48.7	32.6	35.8	12.6	15.5	0.2	0.1
Ավստրալիա	82.9	80.1	-	-	17.1	19.9	-	-
Ղազախստան	94.3	86.6	-	-	-	11.8	5.7	1.6

² Ст'я Россия и страны мира 2002, 2014, т. 295-296:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքն ու շարժընթացը 1998-2014 թթ., մլրդ դրամ³

	1998 թ.	1999 թ.	2000 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
1. Պետական բյուջեի եկամուտներ	196.7 (100.0)*	222.9 (100.0)	205.0 (100)	657.4 (100.0)	785.4 (100.0)	690.0 (100)	946.2 (100.0)	1071.4 (100.0)	1144.8 (100.0)
1.1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	158.9 (80.8)	191.6 (85.9)	185.4 (90.5)	594.0 (90.4)	726.1 (92.5)	625.3 (90.6)	878.4 (92.8)	1001.0 (93.4)	1064.1 (93.0)
ավելացված արժեքի հարկ	59.5 (30.3)	68.3 (30.6)	66.8 (32.6)	248.0 (37.7)	318.3 (40.5)	254.2 (36.8)	369.7 (39.1)	401.9 (37.5)	440.4 (38.5)
շահութահարկ	12.3 (6.2)	21.5 (9.6)	20.4 (9.9)	75.5 (11.5)	86.2 (11.0)	80.8 (11.7)	118.6 (12.5)	124.6 (11.6)	103.6 (9.1)
եկամտային հարկ	42.0 (21.3)	50.3 (22.6)	46.3 (22.6)	135.3 (20.6)	158.7 (20.2)	163.1 (23.6)	220.7 (23.3)	274.5 (25.6)	301.6 (26.3)
ակցիզային հարկ	19.9 (10.1)	21.7 (9.7)	26.1 (12.8)	41.5 (6.3)	45.9 (5.8)	42.8 (6.2)	49.3 (5.2)	52.1 (4.9)	50.6 (4.4)
մաքսատուրք	10.5 (5.3)	8.1 (3.6)	8.7 (4.2)	24.0 (3.7)	37.3 (4.7)	25.1 (3.6)	43.0 (4.5)	46.3 (4.3)	48.4 (4.2)
այլ հարկային եկամուտներ	14.7 (7.5)	21.8 (9.8)	17.2 (8.4)	69.6 (10.6)	79.6 (10.1)	59.3 (8.6)	77.0 (8.1)	101.5 (9.5)	119.6 (10.5)
1.2. Պաշտոնական դրամաշնորհներ	16.1 (8.2)	15.1 (6.8)	11.1 (4.1)	24.5 (3.7)	15.0 (1.9)	21.7 (3.1)	18.7 (2.0)	13.3 (1.2)	17.2 (1.5)
1.3. Այլ եկամուտներ	21.7 (11.1)	16.3 (7.3)	8.5 (5.4)	38.8 (5.9)	44.3 (5.6)	43.0 (6.2)	49.1 (5.2)	57.2 (5.3)	63.4 (5.5)

³ Աղյուսակը կազմված է վերախմբավորված տարբերակով՝ ՀՀ ԱԿԾ նյութերի հիման վրա:

* Փակագծերում. %-ով՝ ընդամենի նկատմամբ:

Պետական բյուջեի եկամուտների աղբյուրների նախկին դասակարգումը նորի հետ համադրելի դարձնելու համար առաջարկվում է.

1. «Պաշտոնական դրամաշնորհները» դարձնել եկամուտների ինքնուրույն աղբյուր:
2. «Պարտադիր սոցիալական ապահովության վճարները» առանձնացնել հարկային եկամուտներից՝ դրանք ներկայացնելով որպես ինքնուրույն աղբյուր:
3. «Ոչ հարկային եկամուտները» ամբողջությամբ, իսկ «Կապիտալ գործառնություններից եկամուտներ» հոդվածից միայն կապիտալ տրանսֆերտներն ընդգրկել «Այլ եկամուտներ» հոդվածում:

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարները» դիտարկվող երկրներում արտացոլվել են պետական բյուջեի եկամուտների կազմում, բացառությամբ՝ Ավստրալիայի և Ղազախստանի: Ըստ այդ երկրների հարկային օրենսդրությունների՝ նշված վճարները ներառվում են ֆիզիկական անձանցից գանձվող հարկերի մեջ, ինչն էլ թույլ չի տալիս ՊՍԱԿ-ը տարանջատել հարկային եկամուտներից:

Համաձայն 2013 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ եկամտահարկը և ՊՍԱԿ-ը ներառվել են եկամտային միասնական հարկի մեջ⁴ և ընդգրկվել պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում: Հետևաբար՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների աղբյուրների կազմը նորից փոփոխվել է (աղյուսակ 1-ի 5-րդ սյուն):

Հարկ է նշել, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի դասակարգումը 1998–2008 թթ. իրականացվել է ըստ «ԿՖՎ–1986»-ի, իսկ 2008 թ. հետո՝ ըստ «ԿՖՎ–2001» հայեցակարգի: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների աղբյուրների կազմը, պայմանավորված ՀՀ բյուջետային և հարկային օրենսդրությունների փոփոխություններով, մշտապես տարբերվել է ինչպես ըստ առանձին ժամանակահատվածների, այնպես էլ միջազգային ոլորտում գործող դասակարգումներից (աղյուսակ 1-ի 3–5-րդ սյուններ):

ՀՀ ներկայիս բյուջետային համակարգը գործողության մեջ է մտել և կարգավորվում է 1997 թ. ընդունած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով⁵, որով սահմանվում են բյուջետային համակարգի կառուցվածքը և բոլոր մակարդակների բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրների կազմը: Համաձայն այդ օրենքի՝ ՊՍԱԿ-ն 1998–2008 թթ. հաշվառվել է ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության հիմնադրամի բյուջեում (ՊՍԱՀԲ), իսկ 2008 թ.-ից հետո՝ ՀՀ պետական բյուջեում⁶: Հետևաբար՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2013 թ. դասակարգմանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է 1998–2008 թթ. ֆիզիկական անձանց և գործատուների կողմից ՊՍԱՀԲ վճարած ՊՍԱԿ-ը գումարել ՀՀ պետական բյուջեի եկամտահարկին, իսկ 2008–2012 թթ. պետական բյուջեի ՊՍԱԿ-ը՝ եկամտահարկին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ 1998–2000 թթ. եկամտահարկի, գույքահարկի և հողի հարկի վճարները մուտքագրվել են ինչպես պետական,

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 17, ՀՕ-228-Ն, Եր., 2010:

⁵ Տե՛ս նույն տեղը, հոդվածներ 3,17 և 28, ՀՕ-137, Եր., 1997:

⁶ Տե՛ս նույն տեղը, հոդված 17, ՀՕ-224-Ն, Եր., 2007:

այնպես էլ համայնքների բյուջեներ: Մասնավորապես՝ եկամտահարկի 15%-ը մուտքագրվել է համայնքների բյուջեներ, իսկ գույքահարկի և հողի հարկի 5%-ը՝ ՀՀ պետական բյուջե: Վերջիններս համարվում են համայնքների բյուջեների եկամուտների աղբյուր:

Հետևաբար՝ համադրելիությունն ապահովելու նպատակով հարկ է նշված տարիների համայնքների բյուջեներ վճարված եկամտահարկը գումարել պետական բյուջեի եկամտահարկին, իսկ ՀՀ պետական բյուջեի եկամուտներից հանել դրանում հաշվառված գույքահարկի և հողի հարկի վճարները՝ դրանք ներառելով համայնքների բյուջեների համապատասխան եկամուտների կազմում:

Կարելի է նաև ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ընդգրկվող հաստատագրված վճարները, պարզեցված և շրջանառության հարկերն ընդգրկել ավելացված արժեքի և շահութահարկի (եկամտային հարկ) կազմում՝ ըստ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված համամասնությունների: Վերջապես՝ ՀՀ և այլ երկրների պետական բյուջեների եկամուտների կազմի համադրելիությունն ապահովելու համար հարկ է համեմատվող երկրների ՊՍԱԿ-ն ընդգրկել պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում, իսկ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում ներառել պետական տուրքերը:

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ 1998–2014 թթ. ընթացքում, բացառությամբ 2000 և 2009 թթ., ՀՀ պետական բյուջեի եկամուտները և դրա առանձին աղբյուրներն ունեցել են աճի միտում: Այսպես՝ 1998 թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 196.7 մլրդ դրամ, որոնք, տարեկան միջինում աճելով 11.6 տոկոսով, 2014 թ. հասել են 1144.8 մլրդ դրամի: Բացի դրանից, ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմում սեփական եկամուտների բաժնեմասը տարեցտարի աճելով՝ 1998 թ. 91.9%-ից 2014 թ. հասել է 98.5%-ի:

Ավելին՝ սեփական եկամուտների 80–94%-ը կազմել են հարկային մուտքերը, որոնց մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեցել են անուղղակի հարկերը: Ընդ որում, դիտարկվող ժամանակաշրջանում դրանց բաժնեմասը հարկային եկամուտների կազմում տատանվել է 51.4–61.4 տոկոսային միջակայքում. ամենամեծ մասնաբաժինն արձանագրվել է 2002 թ.՝ 61.4%, ամենափոքրը՝ 2013 թ.՝ 51.4%:

Ամփոփելով կարող ենք արձանագրել. համապատասխան տեղեկատվության առկայությամբ և նկարագրված գործողությունների իրականացմամբ կարելի է ապահովել պետական բյուջեի եկամուտների աղբյուրների տարբեր դասակարգումների համադրելիությունը ինչպես ըստ առանձին ժամանակահատվածների, այնպես էլ ըստ միջերկրային համեմատությունների:

МАНУК МОВСИСЯН

Декан факультета "Информатики и статистики" АГЭУ,
кандидат экономических наук, доцент

Подходы к вопросу обеспечения сопоставимости классификации доходов государственного бюджета РА.

В статье рассмотрены источники формирования доходов государственного бюджета и проблемы обеспечения сопоставимости классификации доходов в соответствии с разными методами. В частности, предложены последовательные шаги, обеспечивающие возможность приведения показателей источников дохода государственного бюджета к сопоставимому виду, как в постсоветский период, так и приведение соответствующих показателей к сопоставимому виду для межстрановых сравнений.

Ключевые слова: государственный бюджет, бюджетные доходы, статистика финансов, налоговые доходы, государственные пошлины.

JEL: H24, H25, H27, H30, C40

MANUK MOVSISYAN

Dean of the Department of "Informatics and Statistics"
at ASUE, PhD in Economics, Associate Professor

Approaches to Ensuring Comparability of the RA State Budget Revenue Classification.

The article touches upon the comparability of ensuring the revenue formation sources of the state budget which are grouped in different categories. We have offered sequential steps of action, and as a result it has ensured both the comparability of indexes of the RA state budget revenue sources in various years and the indexes of the state budget of different countries

Key words: state budget, budget revenues, finance statistics, tax revenues, state duties.

JEL: H24, H25, H27, H30, C40